Շվեդիա
Sverige

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինք

Երևանի ավագանու ընտրություններ 2023

Երկարաժամկետ դիտարկման
միջանկյալ զեկույց

/23.08.2023-03.09.2023/

Նախաբան

2018թ. հեղափոխությունից հետո Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը հրաժարական տվեց, իսկ ավագանին չառաջադրեց այլ թեկնածու: Արդյունքում 2018թ. սեպտեմբերի 23-ին տեղի ունեցան Երևանի ավագանու արտահերթ ընտրությունները, որտեղ Քաղաքացիական պայմանագիր և Առաքելություն կուսակցությունների կողմից ձևավորած «Իմ քայլը» դաշինքը ստացավ Երևանի ավագանու 65 մանդատներից 57-ը, իսկ նրանց ցուցակը գլխավորող Հայկ Մարությանն օրենքի ուժով դարձավ քաղաքապետ:

2020թ. կորոնավիրուսային համավարակի և 44-օրյա պատերազմի ընթացքում և արդյունքում առաջացած, սակայն ամբողջությամբ չբարձրաձայնված հակասությունները սրվեցին 2021թ ընթացքում և 2021թ. դեկտեմբերին իշխող Քաղաքացիական պայմանագիր կուսակցության նախաձեռնությամբ Իմ Քայլը խմբակցությունն անվստահություն հայտնեց քաղաքապետ Հայկ Մարությանին: Ավագանին հաջորդիվ քաղաքապետ ընտրեց ավագանու անդամ և քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանին: 2022թ. սեպտեմբերին փոխքաղաքապետ նշանակվեց իշխող Քաղաքացիական պայմանագիր կուսակցության վարչության անդամ, նախկին փոխվարչապետ, քաղաքապետի ապագա թեկնածու Տիգրան Ավինյանը[1]:

2023թ. հուլիսի 13-ի ՀՀ Կառավարության նիստում Երևանի ավագանու հերթական ընտրությունների օր նշանակվեց սեպտեմբերի 17-ը:

Ընտրությունների քարոզարշավի մեկնարկից ի վեր «Անկախ դիտորդ» դաշինքի 11 դիտորդներ երկարաժամկետ դիտորդություն են իրականացնում Երևանի բոլոր վարչական շրջաններում: Քարոզարշավի առաջին 10 օրերի ընթացքում դիտորդները հարցազրույցներ են իրականացրել առաջադրված ուժերից վեցի 18 նախընտրական շտաբների ղեկավարների հետ և տասը ուժերի 22 թեկնածուների հետ: Դիտարկվել են 10 ուժերի 57 հավաքներ և հարցազրույցներ են իրականացվել այդ հավաքներին մասնակցող 92 անձանց հետ:

Արձանագրվել է միջադեպի/խախտման մասին 30 ահազանգ: Դրանք ուսումնասիրվել են իրավաբանական աջակցության թիմի կողմից և ձեռնարկվել են անհրաժեշտ գործողություններ:

Արձանագրված խախտումների գերակշիռ մասը վերաբերում է քարոզչական տպագիր նյութերին. չսահմանված վայրերում պատստառների առկայությանը, պաստառների վնասմանը, խախտումներով տպագրված նյութերին:

Արձանագրվել են վարչական ռեսուրսի օգտագործմամբ և այլ շահագրգռությամբ հավաքների մասնակցության ապահովման դեպքեր և քարոզչությունը պաշտոնական լիազորությունների իրականացման հետ համատեղման դեպքեր:

[1] Վարչական ռեսուրսների չարաշահմամբ անհավասար հնարավորությունների ձևավորումը խախտում է ժողովրդավարական սկզբունքները՝ https://hcav.am/22-08-2023independentobservermediamonitoring/

Ընտրական օրենսդրություն

Երևան քաղաքում տեղական իշխանությունների ձևավորման համամասնական ընտրակարգը կիրառվում է 2009 թվականից: 2018 թվականից ի վեր ընտրական օրենսդրությունում տեղի են ունեցել բազմաթիվ փոփոխություններ, որոնց մի մասը վերաբերում է Երևանի ավագանու այս ընտրություններին:

Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը, որը վերաբերելի է ՀՀ-ի բոլոր համայնքներին բացառությամբ Երևանի, համայնքի ղեկավարի արտահերթ կամ հերթական ընտրությանը, ինչպես նաև ավագանու լուծարման հիմքերին անդրադառնալիս, հղվում է Ընտրական օրենսգրքին առանց կոնկրետ հոդված նշելու: Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը 2020թ. իրականացված փոփոխությունների արդյունքում, քաղաքապետի չընտրվելու դեպքում ավագանու ժամկետի կրճատման առումով հղում է կատարում ՀՀ Ընտրական օրենսգրքի 142.2 հոդվածին: Այս հոդվածով կարգավորվում է համամասնական ընտրակարգով համայնքի ղեկավարի հերթական ընտրությունը: Արդյունքում 142.3 հոդվածը, որը կարգավորում է համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությունը, Երևանի դեպքում դառնում է ոչ կիրառելի: Տեղական ինքնակառավարման մասին օրենքի և Երևանում տեղական ինքնակառավարման մասին օրենքի կարգավորումների տարբերության արդյունքում քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի հրաժարականից հետո ավագանու կողմից համայնքի նոր ղեկավար չընտրելը հիմք չհանդիսացավ ավագանու ժամկետը կրճատելու և արտահերթ ընտրություններ նշանակելու համար:

2021թ. կատարված փոփոխություններով ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում կիրառվող քվեարկության կարգը վերաբերելի է դարձել նաև Երևանի ավագանու ընտրություններին: Այս կարգի համաձայն յուրաքանչյուր կուսակցության և կուսակցությունների դաշինքի համար տպվում է առանձին քվեաթերթիկ: Ընտրողը քվեարկության սենյակում ստանում է բոլոր քվեաթերթիկները և մեկ ծրար և իր նախընտրած ուժի քվեաթերթիկն առանց որևէ նշում անելու կամ ծալելու դնում է ծրարի մեջ:

2023թ. ուժի մեջ մտած կարգավորման համաձայն քվեարկության սենյակներում և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նստավայրերում տեսանկարահանումն և հեռարձակումը նախատեսվել է նաև ՏԻՄ ընտրությունների ժամանակ: Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ առաջին անգամ կիրառվում է թեկնածուների գրանցման էլեկտրոնային համակարգը: Գովազդային վահանակների բաշխումը ևս իրականացվում է էլեկտրոնային համակարգով: Էլեկտրոնային գրանցման համակարգը գործում է դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների համար 2022 թվականից:

Խոշորացված համայնքների ավագանու ընտրությունների դեպքում նախատեսվում է կուսակցությունների ընտրացուցակներում խոշորացված համայնքների բնակավայրերի առնվազն 50 տոկոսից թեկնածուներ ներկայացնելու քվոտա: Այս պահանջը չի վերաբերում Երևանի վարչական շրջաններին, սակայն դիտարկումը ցույց է տալիս, որ առաջադրված բոլոր ուժերի դեպքում ներկայացված են վարչական շրջանների մեծամասնությունը: Մեկ սեռի ներկայացուցիչների թիվը ընտրական ցուցակի ամբողջական թվով եռյակներում չի կարող գերազանցել 70 տոկոսը: Ավագանու ընտրություններին մասնակցելու համար կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները կարող են ներկայացնել տվյալ համայնքի նախատեսվող ավագանու թվի ⅓-ի չափով թեկնածուներ: Թեկնածուների առավելագույն թիվը ավագանու անդամների թվի եռապատիկն է: Համամասնական ընտրակարգով ՏԻՄ ընտրությունների ժամանակ գործող ընտրական շեմը կուսակցությունների համար վավեր քվեների 4%-ն է, իսկ դաշինքների դեպքում 6%-ը: Նախկին կարգավորումներով այս թվերը համապատասխանաբար 6 և 8 տոկոս էին:

Օրենսդրությամբ երաշխավորված է ավագանու կազմում նվազագույն երեք կուսակցությունների/դաշինքների մանդատներ ստանալը, անկախ ընտրական շեմը հաղթահարելու հանգամանքից:

Քաղաքական համատեքստ

2021թ. ԱԺ արտահերթ ընտրությունները կոչված էին մեղմելու պատերազմի արդյունքում սրված քաղաքական ճգնաժամը: Թեև կարճաժամկետ առումով ընտրություններն ունեցան այդ ազդեցությունը, սակայն 2022թ. դեկտեմբերից սկսված Լեռնային Ղարաբաղի շրջափակման, հումանիտար և անվտանգային իրավիճակի վատթարացումը կրկին հանգեցրին ներքաղաքական իրավիճակի լարվածության առաջացմանը: Երևանի ավագանու ընտրությունները ընդդիմադիր քաղաքական ուժերը կրկին ձևակերպում են որպես իշխանությունների լեգիտիմության քննություն:

2021թ. Ազգային Ժողովի արտահերթ ընտրություններին և հետագա ՏԻՄ ընտրություններին իշխող Քաղաքացիական պայմանագիրը հանդես է եկել «Ապագա կա՛» կարգախոսով: Երևանի ավագանու ընտրությունների կարգախոսը և քարոզչական գիծը կենտրոնանում են կուսակցության ընտրական ցուցակը գլխավորող Տիգրան Ավինյանի կերպարի և միայն ավագանու լիազորությունների շրջանակում լուծվող հարցերի վրա:

Նմանատիպ քարոզչական վարքագիծ են դրսևորում նաև Լուսավոր Հայաստան կուսակցությունը՝ ի դեմս Դավիթ Խաժակյանի և «Հաղթանակ» կուսակցությունը՝ ի դեմս Կենտրոն համայնքի նախկին թաղապետ Վիկտոր Մնացականյանի:

Ազգային ժողովում ներկայացված ընդդիմադիր կուսակցությունները չեն մասնակցում այս ընտրություններին: Ըստ լրատվամիջոցների օգոստոսի 24-ին ԱԺ «Հայաստան» խմբակցության նիստում որոշվել է աջակցել խմբակցության նախկին պատգամավոր Անդրանիկ Թևանյանի գլխավորած «Մայր Հայաստան» դաշինքին[2]:

Մի շարք ուժերի քարոզչության առանցքում Արցախի խնդիրն է: Այդ ուժերից առնվազն Ապրելու երկիր կուսակցությունը և «Մայր Հայաստան» դաշինքը Երևանի ավագանու ընտրությունները ներկայացնում են որպես Հայաստանում իշխանափոխության մեկնարկի հնարավորություն: Նմանատիպ որոշակի շեշտադումներ կան նաեւ Ազգային առաջընթաց կուսակցության խոսույթում՝ «երկիրը փրկելու» նկատառումներից ելնելով:

Սեպտեմբերի 2-ին տեղի ունեցավ Արցախի հանրապետության անկախության հռչակման օրվան նվիրված հանրահավաքը, որը հայտարարվել էր ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Իշխան Սաղաթելյանի կողմից: Ընդհանուր առմամբ խոսնակները չէին անդրադառնում գալիք ընտրություններին, «Մայր Հայաստան» դաշինքի քաղաքապետի թեկնածու, ԱԺ նույն խմբակցության նախկին պատգամավոր Անդրանիկ Թևանյանը, իր խոսքում նշեց «եթե ձեր վստահությունը լինի՝ անձամբ պատրաստ եմ ստանձնել այդ պատասխանատվությունը», չընդգծելով սակայն, ինչպիսի պատասխանատվության մասին է խոսքը:

[2] Որոշվել է աջակցություն հայտնել Անդրանիկ Թևանյանի գլխավորությամբ «Մայր Հայաստան» դաշինքին https://www.aravot.am/2023/08/25/1363922/

2023 թ. Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցություններն ու դաշինքները

2018 թվականի ավագանու ընտրություններին մասնակցում էր 8 կուսակցություն և 4 դաշինք, որոնցից ընտրական շեմը հաղթահարել էին «Իմ քայլը» դաշինքը (Քաղաքացիական պայմանագիր և Առաքելություն կուսակցություններ) և Բարգավաճ Հայաստան կուսակցությունը: Քանի որ Ընտրական օրենսգիրքը նախատեսում է, որ ավագանու կազմում պիտի հայտնվի առնվազն 3 ուժ, հաջորդ առավել շատ ձայներ ստացած «Լույս» դաշինքը (Լուսավոր Հայաստան և Հանրապետություն կուսակցություններ) ևս ստացավ մանդատներ, չնայած չէր հաղթահարել անցողիկ շեմը:

2023թ. ավագանու ընտրություններին վերոնշյալ բոլոր դաշինքների կուսակցությունները մասնակցում են առանձին: Ընդ որում «Առաքելություն» կուսակցության առանցքային դեմքերը հանդես են գալիս նորաստեղծ Ապրելու երկիր կուսակցության ցուցակով և դիրքավորվում են որպես Քաղաքացիական պայմանագրի հիմնական մրցակից:

2023թ. Երևանի ավագանու ընտրություններին մասնակցելու համար առաջադրվել է 1 դաշինք և 13 կուսակցություն: Առաջադրված բոլոր ուժերը գրանցվել են առանց խնդիրների: Ընտրություններին մասնակցելու հայտ է ներկայացրել 808 թեկնածու, որոնցից մեկը հրաժարվել է մասնակցությունից գրանցման մեկնարկին, ևս երեքը՝ օգոստոսի 24-ին:

Ամենաշատ՝ 181 թեկնածու ներկայացրել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, 2-րդ ամենաշատ թեկնածուներ առաջադրել է «Ապրելու Երկիր» կուսակցությունը՝ 129 թեկնածու: «Ազգային Առաջընթաց» և «Հանրապետություն» կուսակցություններն առաջադրել են համապատասխանաբար 71 և 68 թեկնածու, իսկ մյուս բոլոր ուժերն առաջադրել են ավագանու անդամների ընդհանուր թվից (65) պակաս թեկնածուներ:

Կուսակցությունը/դաշինքը	Ընդամենը
2.«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	181
13.«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	129
7.ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	69
9.«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	68
11.«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	50
5.«ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	46
1.«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	46
14.«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	41
3.«ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	33
12.«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	33
10.«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	32
8.«ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	28
4.«ՀԱՂԹԱՆԱԿ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24
6.ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24
Ընդամենը	**804**

Կանայք ամենաքիչը ներկայացված են «Ազգային Առաջընթաց» կուսակցության ընտրական ցուցակում՝ 31,88%, իսկ առավել մեծ ներկայացված են «Ուժը հայրենյաց» և «Հանուն սոցիալական

արդարության» կուսակցությունների ցուցակներում ՝ 50%: Կանայք գլխավորում են միայն «Ապրելու Երկիր» և «Ուժը հայրենյաց» կուսակցությունների ցուցակները:



Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ տվյալ կուսակցության կամ դաշինքի անդամ չհանդիսացող թեկնածուների թիվը չի կարող գերազանցել ընտրական ցուցակի 30%-ը: Հայաստանի եվրոպական կուսակցության անդամ է հանդիսանում այդ կուսակցության ընտրական ցուցակի 95,83%-ը, այսինքն միայն 1 թեկնածու է անկուսակցական: Կուսակցականներն ամենից քիչ են ներկայացված «Ազգային Առաջընթաց» կուսակցության ընտրական ցուցակում՝ 69,57%: Այս դեպքում կուսակցության անդամ չհանդիսացող անձանց թիվը փաստացի գերազանցում է 30%-ը: Կուսակցության գրանցման պահին թեկնածուների քանակը համապատասխանել է Օրենսգրքի պահանջին, սակայն կուսակցության անդամ հանդիսացող թեկնածուի ինքնաբացարկի արդյունքում նվազել է: Գործող կարգավորումներով այդ հանգամանքը կուսակցության գրանցումն ուժը կորցրած ճանաչելու հիմք չէ:

Մասնակցող ուժերից անկուսակցական են «Ուժը հայրենյաց» կուսակցության, «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքի և «Ազգային Առաջընթաց» կուսակցության 1-ին համարները:



դաշինք

Ի տարբերություն խոշորացված համայնքների, Երևան քաղաքի դեպքում չի գործում վարչական շրջաններից թեկնածուներ ներկայացնելու պահանջը (խոշորացված համայնքներում առաջադրվող կուսակցությունները պիտի ներկայացնեն թեկնածուներ բնակվայրերի առնվազն կեսից): Այնուամենայնիվ բոլոր կուսակցությունները թեկնածուներ են ներկայացրել վարչական շրջանների առնվազն կեսից:

Միայն «Քաղաքացիական պայմանագիր» և «Ապրելու Երկիր» կուսակցությունների ցուցակներում են ներկայացվածն թեկնածուներ բոլոր վարչական շրջաններից: Առավել քիչ ցուցակներում ներկայացված են թեկնածուներ Նորք-Մարաշ և Նուբարաշեն վարչական շրջաններից:

Կուսակցությունը/դաշինքը	ԿԵՆՏՐՈՆ	ԱՐԱԲԿԻՐ	ՇԵՆԳԱՎԻԹ	ԱՋԱՓՆՅԱԿ	ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ	ՆՈՐ ՆՈՐՔ	ԷՐԵԲՈՒՆԻ	ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ	ԴԱՎԹԱՇԵՆ	ԱՎԱՆ	ՆՈՒԲԱՐԱՇԵՆ	ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ
1.«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	12	3	4	8	4	9	0	2	2	2	0	0
2.«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	32	21	20	21	20	17	11	12	8	10	6	3
3.«ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	2	6	5	8	6	2	1	2	1	0	0	0
4.«ՀԱՂԹԱՆԱԿ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	12	1	1	2	1	1	2	1	2	0	1	0
5.«ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	10	8	4	7	3	2	5	4	1	2	0	0
6.ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	6	2	1	3	1	1	2	8	0	0	0	0
7.ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	12	16	2	6	5	7	6	4	4	4	0	3
8.«ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	3	3	3	1	8	3	3	2	1	1	0	0
9.«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	14	6	18	7	3	1	15	3	0	0	1	0
10.«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	4	8	5	3	1	2	2	1	3	3	0	0
11.«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	2	7	5	3	8	6	2	7	9	1	0	0
12.«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	2	10	2	2	4	8	2	1	1	1	0	0
13.«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	13	8	16	16	21	11	11	10	11	8	2	2
14.«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	10	6	9	5	0	6	2	1	1	1	0	0
Ընդամենը	**134**	**105**	**95**	**92**	**85**	**76**	**64**	**58**	**44**	**33**	**10**	**8**

Նախընտրական քարոզարշավի դիտարկումների ամփոփում

Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչությունը մեկնարկել է պաշտոնական ժամանակահատվածից շատ ավելի վաղ՝ այն ժամանակ, երբ մրցակից ուժերից յուրաքանչյուրը որոշում է կայացրել մասնակցության համար:

Օրենսգրքով սահմանված քարոզչության ժամանակահատվածից դուրս քարոզչությունը չի սահմանափակվում և չի արգելվում: Միաժամանակ ընտրությունների արդարության սկզբունքը պահանջում է, որպեսզի բոլոր թեկնածուներն ունենան հավասար հնարավորություններ:

Ծախսերի թափանցիկություն

Դիտարկված բոլոր շտաբները գտնվում են մասնավոր տարածքներում և հիմնականում օգտագործվում են վարձակալության հիմունքներով, բացառություն են կազմել միայն ԼՀԿ-ին պատկանող մեկ շտաբը, «Արդար Հայաստան» կուսակցության թեկնածուներից մեկին պատկանող անվարձահատույց օգտագործվող շտաբը, Հանրապետություն կուսակցությանը անվարձահատույց տրամադրված մեկ շտաբը:

Ուշադրություն են գրավում ՔՊ-ին անվարձահատույց օգտագործման պայմաններով հատկացված շտաբների տարածքները: Օրինակ, Երևան քաղաքի ամենաթանկարժեք հատվածներից մեկում՝ Հյուսիսային պողոտայում գտնվող ՔՊ նախընտրական շտաբի հսկայական տարածքը:

Կուսակցությունների մեծ մասը պնդում է, որ շտաբների աշխատանքներում ներգրավվողները այդ աշխատանքը կատարում են կամավոր հիմունքներով: Ուշագրավ է, որ միայն Ապրելու երկիր կուսակցությունն է նշում, որ աշխատանքներում ներգրավածների մի մասը վարձատրվում է: ՔՊ կուսակցության քարոզչական աշխատանքներում ներգրավվողների թիվը առավել մեծ է, իսկ շտաբների ղեկավարներից մեկի պնդմամբ կամավորների մի մասը կուսակցության ԱԺ պատգամավորների օգնականներն են, որոնք վարձատրվում են պատգամավորների կողմից: Միայն «Արդար Հայաստան» կուսակցության մեկ շտաբում և ՔՊ կուսակցության երեք շտաբներում են նշել, որ աշխատանքում ներգրավածների մեջ կան համայնքային կամ պետական պաշտոնյաներ, որոնք արձակուրդում են գտնվում:

Վարչական ռեսուրսի օգտագործում

Հուլիս ամսին «Անկախ դիտորդը» ստացել է տեղեկատվություն, որ մի քանի համայնքներում համայնքապետերին և վարչական ղեկավարներին հրահանգվել է ցուցակագրել մարդկանց, ովքեր հաշվառված են Երևանում և կքվեարկեն Քաղաքացիական պայմանագիր կուսակցության օգտին: «Անկախ դիտորդ» դաշինքն իրականացրել է հետաքննություն և հրապարակել դրա արդյունքները:[3] Ի պատասխան՝ Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը դատական հայց է ներկայացրել «Անկախ դիտորդ» դաշինքի անդամ Իրազեկ քաղաքացիների միավորում հասարակական կազմակերպության դեմ՝ պահանջելով հերքել հրապարակումը և փոխհատուցում վճարել: Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը պահանջել է բռնագանձել 1 մլն դրամ՝ որպես զրպարտության փոխհատուցում, 480 000 դրամ՝ որպես փաստաբանի վճար և 50 000 դրամ՝ որպես պետական տուրք: Կազմակերպության հաշվին այս գումարի չափով արգելանք է դրված:

«Անկախ դիտորդ» դաշինքն ուսումնասիրել է նաև հանրային միջոցներից ֆինանսավորվող լրատվության համաչափությունը՝ մինչև քարոզչության պաշտոնական մեկնարկը Քաղաքացիական պայմանագիր կուսակցության թեկնածու Տիգրան Ավինյանի լուսաբանումը գնահատելու նպատակով: Այս ուսումնասիրությունը[4] հրապարակվել է քարոզչության մեկնարկի նախորդ օրը և

[3] ՔՊ-ն, այլ համայնքների վարչական ռեսուրսն օգտագործելով, ձայներ է հավաքում Երևանի ընտրությունների համար, https://hcav.am/ind-obs-21-07-2023-statement/

[4] Վարչական ռեսուրսների չարաշահմամբ անհավասար հնարավորությունների ձևավորումը խախտում է ժողովրդավարական սկզբունքները https://hcav.am/22-08-2023independentobservermediamonitoring/

հստակ ցույց է տալիս, որ չկարգավորվող ժամանակահատվածում հանրային միջոցներն օգտագործվել են իշխող ուժի թեկնածուի մեկնարկային առավելությունն ապահովելու համար:

Տիգրան Ավինյանի օգտին վարչական ռեսուրսների օգտագործումն արձանագրվել է նաև «Ականատես» դիտորդական առաքելության կողմից:[5]

Ըստ Անկախ դիտորդ դաշինքի տիրապետած տեղեկությունների, վարչական ռեսուրսի օգտագործմամբ է անցկացվել Քաղաքացիական պայմանագիր կուսակցության նախընտրական դրամահավաքը: Նախատեսվող դրամահավաքի վերաբերյալ հրապարակային որևէ հայտարարություն չի եղել, մասնակիցներին տրվել են հրավիրատոմսեր: Վարչապետի աշխատակազմի ենթակայության տակ գործող մի շարք գերատեսչությունների անկուսակցական ղեկավարները և աշխատակիցները անհատական հրավերը ստանալով, պարտավորված են եղել մասնակցել դրամահավաքին: Դրամահավաքի թափանցիկությունը, ինչպես նաև հավաքված գումարի աղբյուրների ու ծախսերի թափանցիկությունը դեռևս հնարավոր չէ ստուգել:

Չնայած նախորդ երկու տարիների ՏԻՄ ընտրություններում վարչական ռեսուրսին նույնպես առավելապես տիրապետում է Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը, սակայն որոշ համայնքներում այն օգտագործվում էր նաև գործող կամ նախկին համայնքի ղեկավարների կողմից, որոնք հանդես էին գալիս ընդդիմադիր դիրքերից: Երևանի ավագանու սպասվող ընտրություններում վարչական ռեսուրսն ամբողջությամբ կենտրոնացած է Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ձեռքերում, որն էլ լայնորեն կիրառում է այն: Քաղաքացիական պայմանագրի ընտրական ցուցակում են բոլոր վարչական շրջանների թաղապետերը և այլ համայնքային պաշտոնյաները, որոնք իրենց լիազորությունների իրականացումը համատեղում են քարոզչության հետ նաև այն դեպքերում, երբ պաշտոնապես գտնվում են արձակուրդի մեջ:

Չնայած մասնակից կուսակցությունների շտաբների ղեկավարների բացարձակ մեծամասնությունը կազմում են տվյալ կուսակցությունների թեկնածուները կամ անդամները, խնդրահարույց է ՔՊ կուսակցության շտաբների ղեկավարների գործառույթը թաղապետերին և այլ համայնքային պաշտոնյաներին վստահելը: ՔՊ կուսակցության ավագանու թեկնածուներ լինելով՝ թաղապետերը քարոզարշավ իրականացնելիս, խնդիրներ են հավաքագրում բնակիչներից և ներկա պատասխանատու պաշտոնյաներին հանձնարարում լուծել այդ խնդիրները: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ հայտարարված արձակուրդում գտնվող թաղապետերը նույն տրամաբանությամբ հրահանգներ են տվել աշխատակիցներին հեռախոսազանգերի միջոցով: Քարոզարշավի ընթացքում թեկնածու հանդիսացող պաշտոնատար անձանց կողմից աշխատանքային պարտականությունների՝ որպես ծառայություն անհատույց տրամադրման դեպքերն այժմ ուսումնասիրվում են «Անկախ դիտորդ» դաշինքի իրավաբանական թիմի կողմից՝ ենթադրյալ ընտրակաշառքի հատկանիշներով:

Խնդրահարույց է նաև ՔՊ կուսակցության շտաբների աշխատանքում ներգրավված անձանց հարցը. որպես կամավորներ ներգրավված են պատգամավորների օգնականները, վարչական շրջանների և քաղաքապետարանի աշխատակիցները, որոնք փաստացի վարձատրվում են պետության կողմից:

Վարչական ռեսուրսի օգտագործումը առավել տեսանելի է դառնում ընտրողների հետ ՔՊ կուսակցության ավագանու թեկնածուների հանդիպումների մշտադիտարկման ընթացքում: Բակային հանդիպումների, վարչական շրջաններում փոքր հավաքների իրականացմանը հիմնականում լծված են թաղապետարանների աշխատակիցները, իսկ մասնակիցների մեջ նկատելի են քաղաքապետարանի ենթակայության տակ գործող մանկապարտեզների, դպրոցների աշխատակիցները, այլ ՀՈԱԿ-ների կոլեկտիվների ներկայացուցիչները: Դիտորդներին պարբերաբար լսելի են դառնում այդ «մասնակիցների» խոսակցությունները, որոնց վերլուծությունը թույլ է տալիս պնդել մասնակցության ոչ կամավոր լինելը: Ավելին, հավաքների ընթացքում հարցազրույցներից պարզ է դառնում, որ որոշ մասնակիցներ հավաքին ներկա լինելու համար աշխատանքային ժամին լքել են այլ վարչական շրջանում աշխատանքի վայրը: Որպես հստակ նույնականացված կոլեկտիվ,

[5] ՏԵՂԵԿԱՆՔ Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների նախընտրական միջավայրի վերաբերյալ https://transparency.am/hy/media/news/article/4971

ում մասնակցությունը ապահովված էր վարչական լծակների միջոցով կարելի է նշել թիվ 19-րդ պոլիկլինիկայի և 113-րդ դպրոցի աշխատակազմները:

Կոլեկտիվների և այլ խմբերի ուղղորդված մասնակցությունը վերահսկում են «ձայնային ձեռներեցները», որոնք ունեն իրենց պատասխանատվության տարածքների հստակ սահմանները, թե որ բակը կամ թաղը որ խմբի պատասխանատվության տիրույթում է: Այս խմբերում ներգրավվածների զգալի մասը 2017թ. Երևանի ընտրություններում ներառված էին ՀՀԿ–ի և Տարոն Մարգարյանի օգտին տարվող աշխատանքներում: Զարմանալիորեն համընկնում են նաև հավաքատեղիները:

Հարկ է նշել, որ Երևան քաղաքի վարչական շրջաններին ուղղված հարցումները, որոնցով փորձել ենք պարզել աշխատակիցների արձակուրդում գտնվելու վերաբերյալ տեղեկատվությունը, մնացել են անպատասխան կամ տեղափոխել են պատասխանների ժամկետը 30 օրով:Շտաբների բացման և գործունեության հետ կապված որևէ խոչընդոտների մասին տեղեկություններ շտաբների ղեկավարները չեն հայտնել, քարոզչանյութերի տարածման հետ կապված ոչ էական խոչընդոտների մասին հայտնել է հիմնականում Ապրելու երկիր կուսակցությունը, որոնց հետ կապված կուսակցությունը դիմել է ԿԸՀ և ոստիկանություն:

Մտահոգություն են առաջացնում նաև ահազանգերը, որ Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը ընտրողների ցուցակագրման և կապ հաստատելու համար ներգրավում է ոստիկանության ծառայողների և կոմունալ ծառայությունների աշխատակիցներին: Սա նույնպես վարչական ռեսուրսի չարաշահման դրսևորում է, և միաժամանակ անձնական տվյալների ապօրինի փոխանցում երրորդ անձանց:

Բռնության կոչեր, ատելության խոսք

Ի տարբերություն վարչական ռեսուրսի կիրառման, իշխող ուժի թիմը զերծ է մնում բռնության կոչերով, ատելության խոսքով հանդես գալուց: Թեկնածուները սեփական հանրային խոսքը սահմանափակում են զուտ Երևանի ինքնակառավարման, կոմունալ հարցերի, ճանապարհաշինության՝ քաղաքային խնդիրների տիրույթով:

Դիտարկված ժամանակահատվածում, համացանցից դուրս, ատելության խոսքի կիրառման մենաշնորհը պատկանում է «Մայր Հայաստան» դաշինքին: Դրանք ակնառու են դաշինքի հավաքների, նախընտրական հանդիպումների ժամանակ: Ավելի հաճախ, այդ կոչերը չեն արվում ընտրական ցուցակի առաջին համարի շուրթերով, այլ կիրառվում է դաշինքի անդամ Երկիր Ծիրանի կուսակցության նախագահ Զարուհի Փոստանջյանի և իր կուսակիցների կողմից: Ելույթների ժամանակ հիմնականում հնչում են անվանարկող թեզեր. «….փաշա օղլի, ով ձայն տա ՔՊ-ին թուրք ա, թաթարների տված գումարներով՝ թաթարների համար բնակատեղիներ են կառուցվում, սրբապիղծներ են, դավաճաններ են»: Այս դաշինքի անվանարկման թիրախում են ոչ միայն իշխող ուժը, այլ նաև նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը և նրա կողմնակիցները: Ի դեպ, Հայկ Մարությանին թիրախավորում են ոչ միայն «Մայր Հայաստան» դաշինքի թեկնածուները, այլ նաև «Ուժը հայրենյաց» կուսակցության ներկայացուցիչ Տիգրան Արզաքանցյանը:

Իսկ համացանցում մեդիա տեռորի բոլոր տարրերով հագեցված ատելության խոսք, հալածանքի, բռնության տարրեր են առկա «Հանրային ձայն» կուսակցության պատվավոր նախագահ Վարդան Ղուկասյանի եթերներում, այդ ուժի ֆեյսբուքյան էջերում և այլ սոց. կայքային հարթակներում:

Մինչդեռ մյուս ուժերի կողմից քարոզչության կանոնների խախտման մասին բարձրաձայնելիս ՔՊ կուսակցությունը նշում է Ապրելու երկիր և Ազգային առաջընթաց կուսակցությունների կողմից հակաքարոզչությունը (որը սակայն չի հանդիսանում օրենսդրական նորմերի խախտում): Ապրելու երկիր, Հանրային ձայն, Արդար Հայաստան և Հանրապետություն կուսակցությունները մատնանշում են ՔՊ-ի կողմից նախընտրական հավաքներում թաղապետարանների և դպրոցների աշխատակազմի համատարած ներգրավումը աշխատանքային ժամերին: Մատնանշվում է նաև Հանրային ձայն կուսակցության թեկնածուների կողմից տարածվող ատելության խոսքը:

դաշինք

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքը երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդական առաքելություն է իրականացնում հետևյալ անդամ և գործընկեր կառույցների հետ.

- Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
- Իրազեկ քաղաքացիների միավորում
- Ուղղակի ժողովրդավարություն,
- Գյումրու առաջընթաց,
- «Ռեստարտ Գյումրի» /Գյումրու «Ռեստարտ նախաձեռնությունների կենտրոն» ՔՀՁ ՀԿ,
- Կանանց իրավունքների տուն
- Մարդու իրավունքների եզդիական կենտրոն

Երկարաժամկետ դիտարկումն իրականացվում է Շվեդական միջազգային զարգացման համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ «Անկախ դիտորդ առաքելություն – Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ 2023» ծրագրի շրջանակներում:

Այս հրապարակման բովանդակության համար պատասխանատվություն է կրում Անկախ դիտորդ հասարակական դաշինքը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի ֆինանսավորող կազմակերպության տեսակետները:

Անկախ Դիտորդը շարունակում է դիտարկել նախընտրական քարոզչությունը:

Խախտումների դեպքում կարող եք ահազանգել 077032268 հեռախոսահամարով:

Եթե ընտրությունների հետ կապված խախտվել են Ձեր իրավունքները կարող եք զանգահարել

Հելսիկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

077 234324

041 123302

Facebook: @Անկախ դիտորդ - Independent Observer

E-mail: independentobserverarm@gmail.com

Twitter: @IndObserverArm

Telegram: https://t.me/AnkakhDitord